լու նոյն արկղին մէջ. կտակը պիտի ըլլայ ի Նպաստ Ս. Յակոբի վանքին և ո՛չ ազգականներու կամ ուրիշներու, միաբան մը տարին մի անգամ կրնայ փոփոխութիւն մտցնել իր կտակին մէջ. անթուական բնագիր ձեռագիրէ մը քաղելով այս որոշումը ստորագրողներու անունները ստորև կը դնենք: Բացի Մկրտիչ Արքեպս.էն ստորագրած են դարպասի կարապետ եպս., Կիպրացի Սարգիս աբեղայ, ժամօրհնող Սահակ վրդ., խորհրդական Յակոբ վրդ. ժամասաց Անտոն վրդ. Սահակ վրդ. Վանցի. Հաճընցի Եփրեմ աբեղայ, Գրիգորիս վրդ., ժամասաց Յովհան. վրդ., Կարապետ վրդ. Կարնեցի. արանց խուսոփանահայր Յարութիւն վրդ. Պոլսեցի, Մեսրոբ վրդ., Տատու Սարգիս վրդ., Սեմափացի Կարապետ վրդ., Նախկին ժամասաց Սարգիս վրդ., Մշեցի Թադեոս վրդ., Հաճընցի Սարգիս աբեղայ. Կեսարացի գրագիր Յակոբ վրդ., Սարկաւագներ՝ Յակոբ. Նիկողայոս. Հայրապետ. թարգման հաճի Մուրատ. Բ. թարգման եւ նապի Յակոբ. սենեկապետ Սեմիմ Սարգիս. ջաղացպան հաճի Միհնա. Իլիհրմի Աշատուր. դրնապան Մ. Աբրահամ. հացագործ հաճի Միհնա. Մարուսանցի հաճի Սարգիս. Շորապան Մ. Դաղուստ. ժամկոչ Պողոս, աշճի Ղազար: Մկրտիչ Արքեպս. կը վախճանի 1838ին և կը թաղուի Ս. Փրկչի վանքը, իր տապանագիրն է հետեւեալը.

«Այս է տապան հանգստեան Սրբոյ Աթոռոյս բազմաշխատ միաբան և խորհրդական աւագ լուսարար Երեւանցի Մկրտիչ Արք-եպիսկոպոսին որ յութսունեւչորս ամօք հասակի հանգեաւ և կը խնդրէ ի հանդիպողացդ տալ զողորմին. յամի տեառն 1838 Յունիս 10»:

ՄԿՐՏԻՉ ԱՐԲԵՊՍ. ՎԵՀԱՊԵՏԵԱՆ կամ ՄԱՆԻՍԱԼԵԱՆ, ԳԱՂԱՏԱՑԻ.—Մբ. Սսոյ. Ծ. 1849ին, աւազանի անունը Կարապետ. աշկ. Էնկիւրիի ազգ. վարժ.ի. Ձեռ. Սսոյ Մկրտիչ կթղ.էն. յետոյ նոյնէն եպս. 1883ին, Այնթապի մէջ. 1885ին Նե. Կիլիկիոյ, Հնդկաստանի մէջ ալ կը մնայ մէկ տարի և կը ներկայանայ Լորտ Տըֆրինի եւ պաշտօնապէս կը մասնակցի տեղւոյն եպիսկոպոսական եկեղեցիին արարողութիւններուն (Արձագանգ, 1886). 1891ին քաղաքական դէպքերու հետեւանքով կը տարագրուի իր ծննդավայրը Դաղատիա. յետոյ 1892ին Երուսաղէմ. 1895ին Ներման կ'արժանանայ և կը մեկնի Պոլիս. վարած է Ատանայի առաջնորդութիւնը եւ այլ քարոզչական եւ վարչական պաշտօններ: 1910ին կը վախճանի Մարաշ: